ՀՈԴՎԱԾՆԵՐ

Վ. Ի. ԼԵՆԻՆԻ ՍՍՀՄ-ի ԺՈՂՈՎՈՒՐԴՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ՊԵՏԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՍՏԵՂԾՄԱՆ ՕՐԻՆԱՉԱՓՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Ա. Զ. ԲԵԳՅԱՆ

Իրավաբանական գիտությունների դոկտոր

Լենինը դեռ մինչև Հոկտեմբերյան հեղափոխությունը բացահայտեց և հիմնավորեց Ռուսաստանի ոչ-ռուս ազգերի պետականության ստեղծման օրինաչափությունները և օբյեկտիվ անհրաժեշտությունը։ Մշակելով ազգային հարցի վերաբերյալ կուսակցության ծրագիրը, նա բազմակողմանի ուսումնասիրեց Ռուսաստանի ազգային հարաբերությունների սիստեմը և եկավ այն եզրակացության, որ հասարակության զարգացման օբյեկտիվ օրենքները պայմանավորում են մեր երկրի ազգերի ու ժողովուրդների պետականության ստեղծումը։

Հետևողականորեն պաշտպանելով ինքնուրույն պետություն կազմելու համար ազգերի իրավունքը՝ որպես միջազգային դեմոկրատիայի պահանջ, Լենինը ազգային հարցում գլխավոր խնդիրը համարում էր ոչ թե Ռուսաստանից առանձնացումը, այլ Ռուսաստանի բոլոր ազգերի բանվորների և աշխատավորների ավելի սերտ մերձեցումը։ Որպես ամեն տեսակ (այդ թվում ազգային) բռնությունների անհաշտ հակառակորդ, Լենինը հանդես էր գալիս ժողովուրդների անջատվելու իրավունքի պաշտպանությամբ, բայց միևնույն ժամանակ, պրոպագանդում էր նրանց կամովին համախմբումը։ Բոլոր ազգերի բանվորների միասնությունը Վ. Ի. Լենինը համարում էր հեղափոխական-դասակարգային և ազգային-ազատագրական պայքարի երաշխիքը։

Առաջ քաշելով բոլոր ազգերի ինքնուրույն և անկախ պետության իրավունքի ծրագրային պահանջը, Լենինը, ռուսական մարքսիստները չէին հրաժարվում պրոլետարիատի համար առավել ընդունելի խոշոր պետության ստեղծման սկզբունքից։ Լենինը թույլատրելի էր համարում, որ որոշակի պայմաններում, միջազգային և ներքին իրադրության փոփոխմամբ կարող է ստեղծվել այնպիսի ռեալ վիճակ, երբ ինքնուրույն և անկախ պետություն ստեղծելու վերաբերյալ ազգերի ինքնորոշման իրավունքի պահանջը դրական համարվի առանձին ազգերի նկատմամբ։

Հավատարիմ մնալով Ռուսաստանի բոլոր ազգերի բանվորների միասնության մարքսիստական ուսմունքին, Վ. Ի. Լենինը այս կամ այն ազգերի՝ Ռուսաստանից անջատվելու և ինքնուրույն ու անկախ պետություն կազմելու դեպքում պարտադիր էր համարում պետական ֆեդերացիայի սկզբունքները։

Իրավացի չեն այն հեղինակները, որոնք գտնում են, որ իբր Վ. Ի. Լենինը, մինչև 1917 թ. օգոստոսը բացառում էր պետական ֆեդերացիայի սկզբունքները

Ռուսաստանի ժողովուրդների համար[1]։ Նա Ռուսաստանի ժողովուրդների համար ևս ֆեդերատիվ սկզբունքների դեմ էր արտահայտվում ոչ բոլոր պայմաններում, «քանի դեռ և որքանով տարբեր ազգեր միասնական պետություն են կազմում»[2] և քանի որ տվյալ պայմաններում ֆեդերացիան հանդիսանում էր մեկ քայլ ետ կենտրոնացման սկզբունքից, դեպի ապակենտրոնացումը, նահանջ այն առավելությունից, որ ուներ կենտրոնացումը առաջադիմական զարգացման համար։ Բացառիկ պայմաններում Վ. Ի. Լենինը ոչ միայն չէր ժխտում ֆեդերատիվ սկզբունքը, այլ ընդհակառակը, գտնում էր, որ մարքսիստներին հարկ կլինի այդ դեպքում ակտիվորեն պաշտպանել ֆեդերացիայի պահանջը։

«Մենք,— գրել է Վ. Ի. Լենինը,— պետք է միշտ և անպայմանորեն ձգտենք բոլոր ազգությունների պրոլետարիատի ամենասերտ միացմանը, և միայն առանձին, բացառիկ դեպքերում մենք կարող ենք առաջադրել և ակտիվորեն պաշտպանել այն պահանջները, որոնք տանում են դեպի մի նոր դասակարգային պետության ստեղծումը, կամ պետության լիակատար քաղաքական միասնության փոխարինումը ավելի թույլ ֆեդերատիվ միասնությամբ և այլն»։

Վ. Ի. Լենինի այդ պարզաբանման սկզբունքային նշանակությունը կայանում է նրանում, որ նա, տվյալ դեպքում ևս հետևողականորեն կիրառում է մատերիալիստական դիալեկտիկան և ազգային հարցի լուծման ձևերի զարգացման ուսմունքը, միշտ և բոլոր դեպքերում դիտում է պրոլետարական ինտերնացիոնալիզմի տեսանկյունից, պահպանելով և ամրապնդելով բոլոր ազգերի բանվորների և աշխատավորների միասնությունը։

Բոլոր ազգերի բանվորների և աշխատավորների միասնությունը չէր բացառում ոչ-ռուս ժողովուրդների կորցրած պետականության վերստեղծումը, կամ նրա ստեղծումը այն ժողովուրդների մոտ, որոնք զրկված էին դրանից։ Վ. Ի. Լենինը ազգային պետականության ձև էր համարում ոչ միայն առանձին ազգային հանրապետությունները, այլև տարբեր ձևի ավտոնոմ միավորները։

Աստիճանաբար ձևավորվում էին կուսակցության հայացքներն այն բարեփոխությունների կոնկրետ ձևերի վերաբերյալ, որոնց պետք է ենթարկվեին հին ազգային-պետական հարաբերությունները։ Բոլոր քաղաքացիների իրավահավասարությունը, անկախ ազգային տարբերություններից՝ մայրենի լեզվով կրթություն ստանալու, ժողովներում մայրենի լեզվով բացատրվելու իրավունք, ինքնորոշման իրավունք՝ ընդհուպ մինչև առանձնանալը և ինքնուրույն ազգային պետություն կազմելը։ Կուսակցությունը առաջ էր քաշում և ակտիվորեն պաշտպանում էր նաև բնակավայրերի մարզային ինքնավարության ինստիտուտը, որը տարբերվում էր իր տնտեսական, աշխարհագրական և այլ հատկանիշներով։ Այդ պահանջները ձևակերպվել են կուսակցության առաջին ծրագրում։

1903 թ. երկրորդ համագումարում ընդունված կուսակցության ծրագրում ազգային հանրապետությունների բնագավառի խնդիրները սահմանված են ինչպես ազգային հարցի համադեմոկրատական, այնպես էլ մարզային ինքնավարության ինստիտուտի պահանջով, որի տակ, ինչպես բազմաթիվ անդամ

---

1 Տես օրինակ՝ Гилилов, Разработка В. И. Лениным принципа строительства многонационального государства («Ученые записки Академии общественных наук»), вып. 30, М., 1958, стр. 55.

2 Վ. Ի. Լենին, Երկեր, հ. 20, էջ 38։

3 Վ. Ի. Լենին, Երկեր, հ. 6, էջ 578—579։

նշել է Վ. Ի. Լենինը, հասկացվում էր մարզային ավտոնոմիան։ Այսպես, «Սոցիալ-դեմոկրատիայի ագրարային հարցը ռուսական հեղափոխությունում» (1908 թ., օգոստոս) աշխատության մեջ Վ. Ի. Լենինը գրել է. «Մեր քաղաքական ծրագիրը բացառում է ամեն տեսակ բռնություն և անարդարություն, պահանջելով լայն ինքնավարություն առանձին գավառների համար»[4]։

Նման մեկնաբանումներ կան նաև նրա այլ աշխատություններում, մասնավորապես «Մի քանի դիտողություններ Լ. Մասլովի պատասխանի առթիվ» գրքում, որտեղ Վ. Ի. Լենինը գրել է. «Հիշեցնեմ, որ 1906 թ. Ստոկհոլմի համագումարից առաջ, վիճելով Մասլովի հետ, ես նշում էի, որ ճիշտ չէ ազգային ինքնավարության հարցը շփոթել հողերի ազգայնացման հարցի հետ։ Ինքնավարությունը (խոսքը վերաբերում է մարզային ինքնավարությանը —Ա. Բ.), ապահովում է մեր ծրագրի հենց հիմունքները»[5]։

Լատիշական երկրամասի սոցիալ-դեմոկրատների 4-րդ համագումարի վերաբերյալ պլատֆորմայի նախագծում Վ. Ի. Լենինը միանգամայն որոշակիորեն ասում է, որ կուսակցության ծրագիրը ազգերի առանձնանալու հետ միասին, պահանջում է. «մարզերի ավտոնոմիա, որոնք պետք է սահմանազատվեն, ի միջի այլոց, և ազգային հատկանիշներով»[6]։

Վ. Ի. Լենինը «մարզային ինքնավարության» ձևակերպման մեջ ներդնում էր միասնական պետության շրջանակներում ոչ-ռուս ազգերի համար լայն մարզային ավտոնոմիայի գաղափարը։ Միաժամանակ նա ընդգծում էր, որ «Ամեն մի ազգային ճնշում վերացնելու համար անչափ կարևոր է ստեղծել ամենափոքր մեծամասնությամբ, ամբողջական միասնական ազգային կազմով ավտոնոմ օկրուգներ»[7]։

Մարզային ինքնավարությունը նշանակում է, որ ազգը ստեղծում է ավտոնոմ պետականություն որոշակի տերիտորիայի վրա, որն ունի տնտեսության ավելի արագ զարգացման համար հնարավորություններ ստեղծող տնտեսական ամբողջություն։ Հայտնի է, որ աբսոլյուտիստական պետությունը խանգարում էր ազգային շրջանների էկոնոմիկայի զարգացմանը, հարուցելով քաղաքական, տնտեսական, գաղափարական խոչընդոտներ։

Ազգային հարցում դեմոկրատական պահանջների նկատմամբ ազգի անտեսման ցարիզմի քաղաքականությունը լրջորեն խոչընդոտում էր ոչ միայն ազգային շրջանների, այլև ամբողջությամբ վերցրած Ռուսաստանի տնտեսական զարգացմանը։ Որքան սուր կերպով էին դրսևորվում հակադրությունները արտադրական ուժերի զարգացման պահանջի և գաղութային ճնշման միջև, այնքան ավելի մեծ հիմքեր էին առաջանում պրոլետարիատի և նրա հեղափոխական կուսակցության համար՝ առաջ քաշելու և պաշտպանելու մարզային ավտոնոմիայի խնդիրը։ Հարկավոր է նկատի առնել այն հանգամանքը, որ նախկինում ճնշված և իրավազուրկ ոչ-ռուս ժողովուրդների վստահությունը շահելու ուղի՝ կուսակցության ծրագրում ազգային պետականության ձևավորման անհրաժեշտության ճանաչումն էր, իսկ հեղափոխության հաղթանակից հետո՝ նաև պրակտիկ իրագործումը։ Մարզային ավտոնոմիայի պայմաններում էկոնոմիկան համախմբում է միևնույն պետության մեջ ապրող ազգե-

4 Վ. Ի. Լ ե ն ի ն, Երկեր, հ. 15, էջ 205։
5 Նույն տեղում, էջ 319։
6 Վ. Ի. Լ ե ն ի ն, Երկեր, հ. 19, էջ 121։
7 Վ. Ի. Լ ե ն ի ն, Երկեր, հ. 20, էջ 44։

բին, նրանց հնարավորություն է տալիս օգտագործել բնության հարստությունները և զարգացնել մարզի, օկրուգի արտադրողական ուժերը, ձեռնամուխ լինել համակուլտուրական զարգացմանը, հաղթահարել հետամնացությունը և հասնել կուլտուրայի զարգացման ավելի բարձր մակարդակի։ Այսպիսով, մարզային ավտոնոմիան ոչ միայն բնակչությանը նախապատրաստում է սոցիալիստական հեռանկարներով առաջադիմական, դեմոկրատական ազգային-պետական շինարարությանը քաղաքական գիտակցությամբ, ակտիվորեն մասնակցելու, այլև հանդիսանում է կարևոր պետական-իրավական, ազգային շրջանների տնտեսական-կուլտուրական զարգացման և Ռուսաստանի բոլոր ազգերի համապետական միասնական շահերի ճիշտ զուգակցման կարևոր պայման։

Ըստ Լենինի, մարզային ավտոնոմիան նախատեսում է բոլոր ազգերի իրավահավասարություն։ Պետական շինարարության բնագավառում, հետևողականորեն պաշտպանելով ազգային իրավահավասարության քաղաքականությունը, Վ. Ի. Լենինը նշում էր, որ չի կարելի լինել առանձին ազգային մարզերի՝ լայն ավտոնոմիայի կողմնակից, ինչպես, օրինակ՝ Լեհաստանի, Ֆինլանդիայի, և մերժել Լիտվայի, Մալոռուսիայի կամ մի այլ, կոմպակտ ազգային բնակչություն ունեցող ոչ մեծ մարզի կամ օկրուգի ավտոնոմիան։ Մյուս բոլոր շրջանների հետ խոշոր ազգային շրջանների իրավահավասարության լենինյան այս սկզբունքն իր մեջ ելակետային դիրքորոշում է պարունակում ազգերի և ժողովուրդների պետականության տարբեր ձևերի ստեղծման համար, որը մարմնավորվեց մեր երկրում սովետական իշխանության հաստատումից հետո։

Մարզային ավտոնոմիայի հիմքում ընկած հավասարության սկզբունքը հնարավորություն է ընձեռում պետական կազմակերպության մեջ ընդգրկել երկրի բոլոր ազգերին։ Ազգերի պետական կազմակերպության ձևերի այդպիսի բազմազանությունը չի թուլացնում դեմոկրատական ցենտրալիզմի սկզբունքը, որն իր բնույթով օրինաչափորեն պահանջում է տարբեր ազգային կազմով բնակչություն ունեցող մարզերի և օկրուգների ավտոնոմիա։ Իսկական դեմոկրատական ցենտրալիզմը, սովորեցնում էր Վ. Ի. Լենինը, ազգային խայտաբղետ կազմ ունեցող երկրում կարելի է իրականացնել միայն մարզային ավտոնոմիայի միջոցով։ Բացի մարզային ավտոնոմիայի ընդհանուր պահանջներից, Վ. Ի. Լենինը առաջ էր քաշում իրավունքների իրավաբանական և փաստական երաշխիքների մի շարք լրացուցիչ պահանջներ, որոնք դիտվում էին ոչ միայն իբրև առանձին քաղաքացիների սուբյեկտիվ, այլև ամբողջական ազգի իրավունքներ։ Այդպիսի երաշխիքներից էին՝ տվյալ տերիտորիայում գտնվող բոլոր պետական և հասարակական հիմնարկների գործավարության լեզվի ընտրության լիակատար ազատություն, տվյալ ազգության դպրոցների, լեզվի, կուլտուրայի զարգացում, ազգերի ազատ զարգացմանը խոչընդոտող բոլոր հին օրենքների լիակատար ոչնչացում, համապետական օրենքի ընդունում, որով մեկ ազգի գերիշխանությունը հաստատելու բոլոր միջոցառումները հայտարարվում են ոչ սահմանադրական, քրեական պատասխանատվության ենթարկելով նրանց, ովքեր հակառակ օրենքի, կփորձեն դրանք անցկացնել կյանքում[8], սոցիալական առաջադիմությունը և ազգային ազատ զարգացումը երաշխավորող բոլոր իրավունքների և հնարավորությունների ընձեռում ոչ-ռուս ժո-

---

8 Վ. Ի. Լենին, Երկեր, հ. 19, էջ 437։

ղովուրդներին՝ հանձինս նրանց մարզային դեմոկրատական օրգանների, ազգային խորհրդարանների վերացում՝ նրա դրսևորման բոլոր ոլորտներում, ոչ-ռուս ազգերի բանվորների՝ միևնույն աշխատանքի համար ռուս բանվորների հետ համահավասար վարձատրում, ռուս կուլակների, կալվածատերերի, գեներալների համար ազգային շրջանների գյուղացիներից խլված հողամասերի վերադարձում։

Վ. Ի. Լենինը ձևակերպեց ազգային առանձնահատկությունները հաշվի առնող նաև ուրիշ պետական-իրավական ձևերի ելակետային սկզբունքներ։ Դրանց թվում նաև ազգային փոքրամասնության պրոբլեմի լուծումը։ Հաշվի առնելով, որ մարդերից ոչ մեկը իրենից չի ներկայացնում լրիվ ազգային սիատարրություն, այլ ընդգրկում է այլ ազգերի փոքրամասնությունների ներկայացուցիչներ, Վ. Ի. Լենինը պահանջում էր ազգային փոքրամասնություններին տալ այնպիսի իրավական երաշխիքներ, ըստ որի չեղյալ համարվեն և ցանկացած քաղաքացու բողոքի համաձայն ենթակա լինեն վերացման այն բոլոր միջոցառումները, որոնք կվնասեն նրանց իրավահավասարությանը։ Հետագայում, արդեն սովետական ժամանակաշրջանում, Վ. Ի. Լենինը զարգացնելով այդ գաղափարը, միաժամանակ պայքարեց այն կյանքում իրագործելու համար։

Ազգային հավասարությունը քայքայելու փորձ կատարողներին քրեական պատասխանատվության ենթարկելու մասին Վ. Ի. Լենինի դրույթների համաձայն, Կիրգիզական ՍՍՀ-ի քրեական օրենսգրքի 61-րդ հոդվածը նախատեսում է պատժի միջոցներ։ Նման հոդվածներ են պարունակում նաև այլ միութենական և ավտոնոմ հանրապետությունների սահմանադրությունները։ Դա ոչ-ռուս ազգերի ազգային-պետական պրոբլեմների լուծման միանգամայն նոր հարցադրում էր, որը խոշոր ներդրում հանդիսացավ Ռուսաստանի ժողովուրդների միջև փոխհարաբերությունների կարգավորման գործում, արմատապես տարբերվելով այն քաղաքականությունից, որը վարում էին մենշևիկները, էսեռները, բունդականները։ Լենինյան աշխատություններ հնարավորություն են տալիս նոր ձևով իմաստավորել մարզային ավտոնոմիայի էությունը՝ որպես ազգային պետականության ձևերից մեկի։ Վ. Ի. Լենինի մշակած ազգային ծրագիրը դարձավ բոլշևիկների դիրքորոշում, որով բոլշևիկ դեպուտատները հանդես էին գալիս Դումայում, մամուլում, կուսակցական և մասսայական կազմակերպություններում։

Վ. Ի. Լենինի կողմից ազգային պետական շինարարության հարցերի տեսական մշակումը հանդիսանում էր բանվոր դասակարգի և նրա դաշնակցի՝ շահագործվող ազգերի սոցիալական և ազգային ազատագրության համար պայքարի բաղկացուցիչ մասը։ Սկզբունքային և պրակտիկ-քաղաքական հսկայական նշանակություն էր ստանում բանվորական և ազգային-ազատագրական շարժումների փոխադարձ կապի հարցը։ Ինչպե՞ս պետք է զարգանա ազգային շարժումը, կդառնա՞ արդյոք ռուսական պրոլետարիատի հեղափոխական շարժումների բաղկացուցիչ մասը, նրա դաշնակիցը, թե՞ շահագործման և իրավազրկության ճնշման տակ խարխափող ոչ-ռուս ժողովուրդները կգնան «իրենց» ազգային բուրժուազիայի հետևից։

Դրանից էր կախված նրանց պատմական բախտը։

Երկար տարիներ ազգային բուրժուազիայի գաղափարախոսները և նացիոնալիստական կուսակցությունները մասսաներին հավատացնում էին, որ ազ-

գային շարժումների ուժը, իբր, բանվոր դասակարգի նկատմամբ նրա չեզոքության մեջ է, որ այդ շարժումների միացումը անբնական է և անհնարին, իսկ այնտեղ, որտեղ դա, համենայն դեպս, տեղի է ունենում, ազգային ազատագրական շարժումը թուլանում է։ Նրանք գտնում էին, որ բանվոր դասակարգը իր ուժերով ընդունակ չէ բարձրանալու ազգային-ազատագրական շարժումների կենսական խնդիրների ըմբռնման մակարդակին։

Վ. Ի. Լենինը, ընդհակառակը, սովորեցնում էր, որ միայն բանվոր դասակարգը կարող է իրականացնել ազգային-ազատագրական շարժման ճիշտ գիտակցված նպատակը, իսկ ազգային բուրժուազիան ավելի շուտ գործարքի մեջ է մտնում ցարիզմի կամ արտասահմանյան պետությունների հետ։ Նա պահանջում էր ազգային-ազատագրական և բանվորական շարժումները դիտել անխզելի միասնության մեջ, վճռականապես դատապարտում էր տարբեր ազգերի բանվորների անջատման կողմնակիցներին։

Ազատ Ուկրաինան հնարավոր է,— ընդգծում էր նա,— վելիկոռուսական և ուկրաինական պրոլետարիատի միասնությամբ, առանց որի դրա մասին խոսք անգամ չի կարող լինել[9]։ Հեղափոխական շարժման հետ միաժամանակ ամրացավ նրա կապը ազգային-ազատագրական շարժման հետ, առաջինի գաղափարները ավելի լին տարածվում երկրորդի մեջ և հեղափոխականացնում նրան։

Աշխարհի ոչ մի բազմազգ երկրում բանվոր դասակարգը այնպիսի հսկայական կազմակերպական ազդեցություն չգործեց շահագործվող ժողովուրդների ազգային-ազատագրական շարժումների վրա, որքան ռուսական բանվոր դասակարգը։ Կուսակցության ղեկավարությամբ նա դարձավ ցարիզմի, որպես «ժողովուրդների բանտի», ջախջախման համար ոչ-ռուս ազգերի և ժողովուրդների պայքարի գլխավոր ուժը։

Ռուսական պրոլետարիատի և Ռուսաստանի բոլոր ժողովուրդների աշխատավորների միացյալ պայքարը մեծ նշանակություն ուներ սոցիալիստական հեղափոխության հաղթանակը արագացնելու գործում։

Վ. Ի. Լենինի դաղափարները, ազգային հարցի լուծման նրա ուսմունքը խոր ազդեցություն գործեցին ոչ-ռուս ազգերի և ժողովուրդների աշխատավոր մասսաների վրա, նպաստեցին նրանց մեջ ինտերնացիոնալիզմի գիտակցության մշակմանը նաև ազգային-պետական շինարարության հարցում։ Դա արտահայտվեց նրանում, որ նրանք շահագրգռվածություն ցուցաբերելով ազգային հարցի դեմոկրատական, պետական-իրավական լուծման նկատմամբ, միևնույն ժամանակ չէին ցանկանում առանձնանալ Ռուսաստանից, ձգտում էին միասնական դեմոկրատական հանրապետության շրջանակներում հասնել ազգային պետականության, այսինքն ավտոնոմիայի, որի գիտական մշակումը տրված էր մարդային ավտոնոմիային նվիրված Վ. Ի. Լենինի աշխատություններում։

Վ. Ի. Լենինի մշակած դիալեկտիկա-մատերիալիստական ազգային ծրագիրը և կոմունիստական կուսակցության քաղաքականությունը, ինչպես նաև դրանց հետևողական իրագործումը մեր երկրի ժողովուրդներին հասցրին համաշխարհային պատմական հաղթանակի։ Այժմ այդ ծրագիրը ոգևորում է շահագործվող ժողովուրդներին՝ նրանց մղած ազատագրական պայքարում։

Բոլշևիկները արժանին հատուցելով հեղափոխական մարքսիստական ազ-

---

9 Վ. Ի. Լենին, Երկեր, հ. 20, էջ 19։

գային նախկին ծրագրին, պաշտպանելով այն ռևիզիոնիստներից, բունդականներից, կովկասյան մենշևիկներից, լիկվիդատորներից, կանգնած էին մարքսիզմի, այդ թվում նրա ազգային ծրագրի, հետագա հետևողական զարգացման դիրքերում։

Բոլշևիկները պայքարում էին չհրաժարվել ոչ ինքնուրույն հանրապետություն կազմելու համար առանձին ազգերի առանձնանալուց, ոչ էլ ֆեդերացիայից, որը հանդիսանում է ազգերի պետական-իրավական մերձեցման կամավոր միություն։ Ինչը ընդունելի չէր անցյալում, այն կարող է ընդունելի դառնալ հեղափոխական շարժման նոր էտապում։ Այդ ժամանակաշրջանում, երբ քաղաքական դրությունը երկրում արագ փոխվել էր և ազգային հարցը պրաղեցրել էր կարևոր տեղ, տեսությունը և պրակտիկան առաջ էին քաշում նոր խնդիրներ, որոնց լուծումը պահանջում էր խոր ուսումնասիրություն։ Ահա թե ինչու, Լենինը մեծ աշխատանք է կատարում ազգային հարցի ուսումնասիրման բնագավառում, նոր աստիճանի հասցնում նրա մարքսյան ըմբռնումը, հարստացնում իր ուսմունքը նոր, կարևոր եզրակացություններով։

Բուրժուա-դեմոկրատական հեղափոխությունը Ռուսաստանում չփոխեց և ոչ մի էական բան չմտցրեց ազգային հարաբերությունների սիստեմում։ Դրանք մնացին որպես ռուս մեծապետական ազգի կողմից ոչ-ռուս ազգերի և ժողովուրդների ճնշման ու շահագործման հարաբերություններ։

Սոցիալիստական առաջադիմության շահերը պահանջում էին սկզբունքորեն այլ ազգային-պետական հարաբերություններ։ Ի հակադրություն ցարիզմի և ժամանակավոր կառավարության վերևում բնութագրված ազգային քաղաքականությանը, բոլշևիկները Լենինի գլխավորությամբ պահանջում էին «հավասարություն ամեն ինչում, այդ թվում նաև պետական շինարարության մեջ» սկզբունքն իրականացնել պրակտիկայում։

Վ. Ի. Լենինը պաշտպանելով ազգերի ինքնորոշման իրավունքը, ընդհուպ մինչև նրանց ինքնուրույն, Ռուսաստանից անկախ, պետության ստեղծումը և բացահայտելով ռուսական պետության շրջանակներում ոչ-ռուս ազգերին բռնությամբ պահելու ռեակցիոն քաղաքականությունը, ձգտում էր այդ ազգերի կողմից բոլշևիկյան ազգային քաղաքականության ըմբռնմանը և հավանությանը։ Ազգային հարցի պետական-իրավական ձևերով լուծումը իրականացնելու պայքարի փորձը պահանջում էր ազգային հարցի լուծման պլանի հետագա կատարելագործում, հաշվի առնելով ազգային-ազատագրական շարժումների նոր պայմաններն ու բնույթը, համասոցիալական և ազգային նոր պահանջները։

Մարքսիստները միշտ հաշվի էին առնում, որ ազգերի կողմից իրենց պետական կառուցվածքի ձևի ընտրության ժամանակ որոշիչը աշխատավորության մեծամասնության, և առաջին հերթին բանվոր դասակարգի շահերն են։ 1917 թ. հունիսին Սովետների համառուսաստանյան առաջին համագումարում պատերազմի հարցի մասին արտասանած ճառում Վ. Ի. Լենինը ընդգծում էր, որ հանրևս գալ ազգային ինքնորոշման դեմ, ինչպես այդ անում էր ժամանակավոր կառավարությունը, կնշանակի վախենալ առանձին հանրապետություններից, որ բանվորների և գյուղացիների տեսանկյունով սարսափելի չէ։ «Թող Ռուսաստանը լինի ազատ հանրապետությունների միություն»[10]։ Հավասար հանրապե-

10 Վ. Ի. Լ ե ն ի ն, Երկեր, հ. 25, էջ 32։

տությունների հավասար միության մասին միտքը Վ. Ի. Լենինի կողմից կրկնվել է «Ուկրաինան», «Ուկրաինան և Ռուսաստանի կառավարող կուսակցությունը»[11] և այլ հոդվածներում։ Լենինը հանճարեղորեն կանխատեսում էր, որ ազգային ինքնորոշման իրավունքի արդար, ուղղակի և հետևողականորեն պաշտպանումը կհանգեցնի ոչ թե պետական միասնության քայքայման, այլ լրիվ դեմոկրատական հիմքերով ժողովուրդների համախմբման։

Մշակելով և զարգացնելով մեր երկրում ազգային հարցի պետական-իրավական ձևով լուծման ուսմունքը, Վ. Ի. Լենինը անշեղորեն ձգտում էր Ռուսաստանի բոլոր ազգերի բանվորների և աշխատավորների անխզելի միասնության հաստատմանը, ընդգծում խոշոր պետականության առավելությունը փոքրի նկատմամբ, պայքարում այն ամենի դեմ, որը խանգարում էր մեր երկրի ժողովուրդների միասնության պահպանմանն ու ամրապնդմանը, ընդդեմ բուրժուական նացիոնալիզմի, հանուն ինտերնացիոնալիզմի։

Կոմունիստական կուսակցությունը սովորեցնում էր, որ ամենակարևորը, հիմնականից հիմնականը հանդիսանում է Ռուսաստանի ժողովուրդների անխախտ միությունը։ Դրա համար էլ Վ. Ի. Լենինը վերոհիշյալ ճառում նշելով, որ առանձին հանրապետությունների գոյությունը բանվորների և գյուղացիների տեսանկյունով սարսափելի չէ, առաջ քաշեց ազատ հանրապետությունների կամավոր միության գաղափարը։

Ռուսաստանի տարբեր ազգերի ազատ հանրապետությունների կամավոր դաշինքի հիման վրա ֆեդերատիվ պետության կառուցվածքը պաշտոնապես արձանագրված է «Աշխատավոր և շահագործվող ժողովրդի իրավունքների դեկլարացիայում» (1918 թ. հունվար), որտեղ սովետական հանրապետությունների ֆեդերացիան ստացավ օրենսդրական ճանաչում։ «Ռուսական սովետական հանրապետությունը,— ասված է Դեկլարացիայում,— կազմվում է ազատ ազգերի ազատ դաշինքի հիման վրա, որպես սովետական ազգային հանրապետությունների ֆեդերացիա»[12]։

Հոկտեմբերյան սոցիալիստական մեծ հեղափոխությունը, որը համարվում է նաև ազգային-ազատագրական հեղափոխություն, խոր հեղաշրջում առաջ բերեց ոչ միայն պետության տնտեսական սոցիալ-քաղաքական, գաղափարական և կուլտուրական կյանքում, այլև նրա ազգային քաղաքականության մեջ։ Նա վերջ տալով «ժողովուրդների բանտ» հանդիսացող բուրժուա-կալվածատիրական կարգերին, նոր դարաշրջան բացեց մեր երկրի բազմազգ պետության ազգային հարաբերություններում, որտեղ յուրաքանչյուր ազգի և ժողովրդի ազատ զարգացումը հանդիսացավ բոլորի ազատ զարգացման պայմանը։

Սովետական իշխանությունը լիկվիդացրեց պետականության նկատմամբ տիրապետող ազգի մենաշնորհը, օգնություն ցույց տվեց Ուկրաինային, Բելոռուսիային, Ադրբեջանին, Հայաստանին, Վրաստանին, Խորեզմին և Բուխարային ստեղծելու և ամրապնդելու անկախ սոցիալիստական սովետական և ժողովրդական սովետական հանրապետություններ։ Մեր երկրի ազգերի և ժողովուրդների մեծամասնության համար ազգային հարցի պետական ու իրավական ձևը հանդիսացավ մարզային ավտոնոմիան, որը դարձավ նրանց պետականության հաստատման և զարգացման հիմքը։

---

11 Նույն տեղում, էջ 100—112։

12 «История советской конституции (в документах)», 1917—1955. Госиздат. М., 1957, стр. 103.

Այսպիսով, ազգային հարցի լուծման այնպիսի պետական-իրավական ձևի ընդունումը և իրագործումը. ինչպիսին էր միմյանց հետ ֆեդերատիվ հիմունքներով շաղկապված ինքնուրույն սովետական ազգային պետությունների ստեղծումը, չէր նշանակում հրաժարում մարզային ավտոնոմիայից։ Մարզային ավտոնոմիան, որպես Ռուսաստանի ժողովուրդների պետական կառուցվածքի ձևերից մեկը, ներառնում էր Ռուսաստանի ժողովուրդների ազգային պետական շինարարության ավելի լայն, ճկուն, ավելի ծավալուն պլան՝ նրանց պատմական զարգացման, աշխարհագրական դիրքի և այլ հատկանիշների համապատասխան։

В. И. ЛЕНИН О ЗАКОНОМЕРНОСТИ И ОБЪЕКТИВНОЙ НЕОБХОДИМОСТИ СОЗДАНИЯ НАЦИОНАЛЬНОЙ ГОСУДАРСТВЕННОСТИ НАРОДОВ СССР

Л. З. БЕГИЯН

Резюме

В. И. Ленин еще до Октябрьской социалистической революции вскрыл закономерность и обосновал объективную необходимость создания государственности нерусских национальностей России. Он теоретически разработал вопрос о национально-государственном строительстве, поднял его марксистское понимание на новую ступень, обогатил марксистское учение о нации и национальной государственности новыми и важными выводами.

Социалистическая демократия,—писал В. И. Ленин в 1916 г.,—«провозглашает, формулирует, осуществляет право наций на свое национальное государство, без которого нет пути к добровольному сближению наций» (В. И. Ленин, ПСС, т. 30, стр. 129).

В. И. Ленин был создателем теории советской национальной государственности. Основой основ советского национально-государственного строительства он считал нерасторжимое единство народов нашей страны. От ленинской формулы «всегда и безусловно стремиться к самому тесному соединению пролетариата всех национальностей», выдвинутой в 1903 году, идет прямая линия к ленинской постановке вопроса о добровольном объединении наций и народностей нашей страны в единое многонациональное Советское федеративное государство.